ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ
ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԿ
NEW GENERATION
HUMANITARIAN NGO

NG-02-119-2105
Մայիսի 4, 2021թ.
Հայաստան, ք. Երևան

Գեղարքունիքի մարզպետ
Գնել Սանոսյանին

Հարգելի պարոն Սանոսյան,

2021թ.-ի մայիսի 26-27-ը «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն նախատեսում է անցկացնել 2-օրյա դասընթաց ՀՀ Երևան քաղաքի և մարզերի ներզատաբանների և թերապևտների մասնակցությամբ։

Հանդիպմանը քննարկվելու են հետևյալ թեմաները՝

- «Գենդեր, գենդերային ինքնություն, գենդերային անհարմարվողականություն»,
- «ԱՀԿ Հիվանդությունների միջազգային դասակարգման 11-րդ թարմացումը (ՀՄԴ-11)»,
- «Ներպետական և միջազգային օրենսդրությունը և բացերը ՀՄԴ-11-ի համատեքստում»։

2-օրյա դասընթացն իրականացվելու է Երևանից դուրս հյուրանոցային համալիրներից մեկում՝ խստորեն պահպանելով նոր կորոնավիրուսային համավարակի տարածման կանխարգելմանն ուղղված ՀՀ կառավարության, Պարետատան և Առողջապահության նախարարության, ինչպես նաև Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից սահմանված ցուցումները և որոշումները։

Աշխատանքային հանդիպման լեզուն հայերենն է։

Բուժաշխատողների մասնակցությունը ապահովելու համար նամակ էր ուղարկվել ՀՀ առողջապահության նախարարություն, որին ի պատասխան ստացել էինք առաջարկություն դիմել Երևանի քաղաքապետարան և ՀՀ մարզպետարաններ՝ նշելով անհրաժեշտ մասնակիցների քանակը (ՀՀ առողջապահության նախարարության պատասխանը կցված է նամակին)։ Սույնով խնդրում ենք Ձեր աջակցությունը վերոնշյալ դասընթացին բուժաշխատողների մասնակցությունը ապահովելու հարցում։

Խնդրում ենք հանձնարարել havetisyan.ngngo@gmail.com էլ-հասցեին ուղարկել Գեղարքունիքի մարզի 2 համապատասխան բուժաշխատողների տվյալները՝ Անուն, ազգանուն, բուժհաստատություն, հեռախոսահամար և էլեկտրոնային հասցե, հնարավորության դեպքում մինչև 2021թ.-ի մայիսի 15-ը։

Հայաստան 0001 ք. Երևան, Թումանյան 10, բն. 7 | +374 60 478989 | NewGenerationNGO@gmail.com; infongngo@gmail.com
Apt. 7, 10 Tumanyan str., Armenia 0001 Yerevan | +374 60 378989 | http://ngngo.net/

Կազմակերպությունը հոգում է հանդիպման մասնակիցների տեղափոխության, կեցության և սնունդի ծախսերը: Դասընթացի իրականացման վայրի մասին տեղեկությունը կուղարկվի մասնակցությունը հաստատած մասնակիցներին:

Կանխավ շնորհակալություն ենք հայտնում համագործակցության համար:

Խնդրում ենք սույն գրությանը պատասխանել գրավոր՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝

ՀԿ նախագահ **Սերգեյ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**

Կատարող՝ Հմայակ Ավետիսյան
+374 60 478989

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

_____№ _____

Ձեր N _____

«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ» ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԿ
ՆԱԽԱԳԱՀ ՍԵՐԳԵՅ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գաբրիելյան,

Ի պատասխան սույն թվականի ապրիլի 26-ի թիվ NG-02-110-2104 Ձեր գրությանը՝ հայտնում եմ, որ «Տրանս քարտեզը ԱԵԿԱ-ում» ծրագրի շրջանակներում անցկացվելիք երկօրյա դասընթացի մասնակիցների թեկնածություններ ստանալու համար անհրաժեշտ է դիմել Երևանի քաղաքապետարան և ՀՀ մարզպետարաններ՝ նշելով Երևան քաղաքից և յուրաքանչյուր մարզից անհրաժեշտ մասնակիցների թիվը:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ՝ ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

Կատարող՝ ԳՀ ԾՀԽ
Ա. Բերեզովսկայա
Հեռ.՝ 060 808003 / 2702